ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՄԱՐԻ ԻԶՄԻՐԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՏՈՒՆ» ՊՈԱԿ

" CHILDREN'S HOME – AFTER MARIE IZMIRLIAN " STATE NON COMMERCIAL ORGANIZATION OF THE MINISTRY OF LABOUR AND SOCIAL ISSUES OF REPUBLIC OF ARMENIA

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N2

«Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ին տնօրեն

«ԷՍԷՍԹԻ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառելու մասին

14. 01.2025թ.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «ԷՍԷՍԹԻ» ՍՊԸ-ի միջև 04.10.2024թ-ին կնքվել է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/6-3-ԵԽ-7-ՄԻ» ծածկագրով «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի կարիքների համար տնտեսական, սանիհիգիենիկ և մաքրիչ նյութերի մատակարարման գնման պայմանագիր, որի 1.1 կետի համաձայն վաճառողը պարտավորվում է գնորդին մատակարարել Պայմանագրի անբաժանելի մաս կազմող N1 և N2 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիրով և գնման - վճարման ժամանակացույցով նախատեսված ապրանքներ: Սակայն «ԷՍԷՍԹԻ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկերում չի իրականավել ապրանքի մատակարարում՝ խախտվելով պայմանագրով սահմանված վաճառողի պարտավորությունները, որի արդյունքում 25.12.2024թ.-ին գնորդը միակողմանի լուծել է պայմանագիրը՝ այն համարելով լուծված 122812 (մեկ հարյուր քսաներկու հազար ութ հարյուր տասներկու) ՀՀ դրամի չափով:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կիրառելով ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամաբ հաստատված «Գնումներ գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները 25.12.2024թ.-ին «ԷՍԷՍԹԻ» ՍՊԸ-ին ուղարկվել է համապատասխան ծանոցում և տրվել է 7 աշխատանքային օր՝ տուժանքով սահմանված պայմանագրի ապահովման 22684.8 /քսաներկու հազար վեց հարյուր ութսունչորս դրամ ութսուն լումա/ ՀՀ դրամ և որակավորման ապահովման 34027.2/ երեսունչորս հազար քսանյոթ դրամ, քսան լումա/ ՀՀ դրամ գումարները Շահառուի 900008000664 հաշվեհամարին փոխանցելու համար, սակայն սահմանված ժամկետում «ԷՍԷՍԹԻ» ՍՊԸ-ի կողմից չի վճարվել պայմանագրի և որակավորման ապահովումների գումարը:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի « ա » պարբերությամբ.

ՈՐՈՇԵՑԻ

1. «ԷՍԷՍԹԻ» ՍՊԸ-ի տվյալները համապատասխան հիմքերով ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՏՆՕՐԵՆ՝ Տ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Երևան ✉ 375037 Մ. Յաղուբյան 13 ☎ (010) 20-15-86, 20-65-92, maryizmirlyan.childcarecenter@mlsa.am